



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2011 թվական N 118-Ա

ք.Հրազդան

ՆԵՐՄԱՐՋԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762-Ն որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Ատլանտ-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2011 թվականի մարտի 24-ի գրությունը .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հրազդան-Ծաղկաձոր միկրոավտոբուսային երթուղում գործող տրանսպորտային միջոցների քանակը պակասեցնել մեկով:
2. Դադարեցնել «Ատլանտ-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված Հրազդան-Մեղրաձոր ավտոբուսային երթուղու սպասարկման պայմանագիրը և հայտարարել նոր մրցույթ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ.ՇԱՀԳԱԼ ԴՅԱՆ